ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 323

ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 18-Ի N9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի n 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 526-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ , 17-րդ կետերի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի՝ որոշում եմ

1.Քասախ համայնքի ղեկավարի 2017 թվականի հունվարի 18-ի «2017 թվականի գնումների պլանը հաստատելու մասին» N 9 որոշման 1 հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելված 1-ի :

2. Ապահովել փոփոխված գնումների պլանի հրապարակայնությունը օրենքով սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 05
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 324

ՀԱՍՑԵԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի N 13 որոշմամբ և հիմք ընդունելով քաղաքացի Անուշավան Մկրտչյանի դիմումը ՝ **որոշում եմ**

Քաղաքացի Մարգարիտ Սեդրակի Մկրտչյանին պատկանող 019-010 կադաստրային ծածկագրով 0,91 հա բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել Մ. Սարյան փողոց թիվ 26 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

2017 թ. դեկտեմբերի 05
Գ.Քասախ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՍԱԽ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քասախ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Քասախ, (098) 44-03-24, (093) 08-07-06 kasakh-village@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 325

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև Քասախ համայնքի ավագանու 2001 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 13 և 2017 թվականի հուլիսի 31-ի թիվ 39 որոշման պահանջներով՝ ***որոշում եմ***

1. Քասախ համայնքի սեփականությունը հանդիսացող 1451,1 քմ մակերեսով մշակույթի ըունը և դրա սպասարկման համար առանձնացված 07-065-0062-0001 կադաստրային ծածկագրով 0.6163 հա հասարակական կառուցապատման հողամասը (սեփականության վկայական թիվ 29112017-07-0075) անհատույց, անորոշ ժամանակով օգտագործման իրավունքով տրամադրել Քասախի «ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ» ՀՈԱԿ ին՝ արտադպրոցական կրթություն կազմակերպելու նպատակով:
2. Լիազորել Քասախի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Գարուշ Նվերի Սիմոնյանին (անձնագիր AN 0779978 տրվ. 23.12.2013թ. 046-ի կողմից), Քասախի «ԱՐՎԵՍՏ ՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ԴՊՐՈՑ-ՍՏՈՒԴԻԱ» ՀՈԱԿ ի հետ կնքել օգտագործման իրավունքի տրամադրման պայմանագիր. հանդես գալ նոտարական գրասենյակում, ստորագրել սույն հանձնարարության հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

20 17 թ. դեկտեմբերի 07
Գ.Քասախ